

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

**Ը. 00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ե Ր Ե Վ Ա Ն – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական
ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Միքայել Սերգեյի Մելքոնյան

Առաջատար
կազմակերպություն

Տնտեսագիտության թեկնածու, թեկնածու
Հայկ Աշոտի Մարկոսյան

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հոկտեմբերի 4-ին ժամը 14⁰⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. մայիսի 24-ին

014 Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լ. Հ. Գրիգորյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հրատապությունն և արդիականությունը: Բնական մենաշնորհ ընկերությունները մեր հանրապետությունում համարվում են խոշոր գործատուներ և հարկատուներ, իրենց գործունեության ոլորտներում դրանց փոխկապակցված ճյուղերում հանդիսանում են «լոկոմոտիվ», հետևաբար դրանց գործունեության ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքները մուլտիպլիկատիվ էֆեկտով իրենց հետևանքն են թողնում ամբողջ տնտեսության վրա: Պետության կողմից բնական մենաշնորհի գործունեության բնագավառում կարգավորող լծակների կիրառումը պայմանավորված է ազգային տնտեսության համար այդ ոլորտներում մատուցվող ծառայությունների օգտակարությամբ: Բացի այդ, բնական մենաշնորհները ազգային տնտեսության կայուն զարգացման գործում ունեն ռազմավարական դեր: Բնական մենաշնորհները շատ հաճախ նույնականացվում են հանրային ծառայությունների հետ և շատ դժվար է լինում հստակ տարանջատել այդ երկու երևույթները: Այդ դեպքում, եթե բնական մենաշնորհի ոլորտները դիտարկվում են որպես հանրային ծառայությունների ոլորտներ, ապա նշանակում է, որ այդ ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների վերջնական նպատակը հանրային բարիքի ստեղծումն և հասարակության պահանջների բավարարումն է:

Ուստի, պետությունը պետք է օրենսդրորեն հստակ սահմանի բնական մենաշնորհի կարգավորման և հսկողության մեխանիզմներ և համապատասխան միջոցներ ձեռնարկի դրանց իրականացման համար, այնպես, որ մի կողմից, չխոչընդոտի տվյալ ոլորտի ընկերության գործունեությունը, մյուս կողմից, պաշտպանի հասարակության շահերը: Սկսած նորանկախ ժամանակներից՝ նշված ոլորտներում իրականացվել և իրականացվում են բազմաթիվ բարեփոխումներ, այնուամենայնիվ, բնական մենաշնորհի ոլորտների կառավարումը (տնօրինող ընկերությունների կողմից) և այդ ոլորտների պետական կարգավորումը մնում է պակաս արդյունավետ: Սա նշանակում է, որ բնական մենաշնորհների և հանրային ծառայությունների ոլորտների մասին հետազոտությունները, որոնք ուղղված են բնական մենաշնորհի ընկերությունների կառավարման և այդ ոլորտների պետական կարգավորման արդյունավետության բարձրացմանը, ունեն մեծ կարևորություն: Ատենախոսության հրատապությունն և արդիականությունը պայմանավորված են նշված հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը բնական մենաշնորհների կառավարման և այդ ոլորտների պետական կարգավորման արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների քննարկումն ու առաջարկությունների մշակումն է, որի համար աշխատանքում առանձնացվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել բնական մենաշնորհների էությունը, դրանց տեսամեթոդաբանական հիմքերը, ձևավորման պատմական

առանձնահատկությունները, հակամենաշնորհային քաղաքականության էությունը,

2. ուսումնասիրել բնական մենաշնորհների կառավարման ու կարգավորման խնդիրները, գնահատել դրանց դերը պետության և հասարակության զարգացման հարցում,
3. բացահայտել և քննարկել բնական մենաշնորհների և հանրային ծառայությունների միջև գոյություն ունեցող կապերը,
4. ուսումնասիրել բնական մենաշնորհ ոլորտների կառավարման միջազգային փորձը, խնդիրները, սկզբունքները, սակագնային կարգավորման մոդելները և դրանց կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
5. ուսումնասիրել բնական մենաշնորհ ոլորտներում առկա խնդիրները և ստացված արդյունքների հիման վրա մշակել ոլորտի կառավարման բարելավման ուղիներ,
6. ՀՀ էներգետիկ շուկայի օրինակով ուսումնասիրել և բացահայտել բնական մենաշնորհների իրավական դաշտում առկա հիմնախնդիրները,
7. բացահայտել բնական գազի և էլեկտրաէներգիայի շուկաների սակագնային քաղաքականության խնդիրները և ներկայացնել բարելավման ուղիներ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտներն են, իսկ առարկան՝ էներգետիկ ոլորտում բնական մենաշնորհի հանդիսացող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության և կառավարման տեսությունների հայրենական և արտասահմանյան գրականությունը, ոլորտը կարգավորող ՀՀ և արտասահմանյան օրենքները, իրավական այլ ակտերը, կազմակերպությունների գործունեության բարձրացման հիմնախնդիրներին առնչվող գիտական հետազոտությունների տեսական և մեթոդական դրույթները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, համապատասխան պետական մարմինների, այդ ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների կայքէջերում տեղ գտած պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են ֆինանսատնտեսական, տնտեսավիճակագրական, համակարգային և համեմատական վերլուծության մեթոդներ:

Աշխատանքի գիտական նորույթը: Հետազոտության գիտական արդյունքները ամփոփված են հետևյալ նորույթներում՝

1. «Բնական մենաշնորհ» և «հանրային ծառայություն» ոլորտների համակողմանի վերլուծության հիման վրա հիմնավորվել է «բնական մենաշնորհի» մասին օրենքի ընդունման հայեցակարգը:
2. Բնական գազի և էլեկտրաէներգիայի շուկաների սակագնային կարգավորման քաղաքականության մասով, կապված սակագների հաշվարկման

մեթոդիկաների ճշգրտման և փոփոխման հետ, (շահույթի նորմա, կորուստների նվազեցում, ներդրումներ), առաջարկվել են նոր հայեցակարգային լուծումներ:

3. Բնական գազի փոխադրման և բաշխման համակարգերի համակողմանի ուսումնասիրության հիման վրա հիմնավորվել է բնական գազի բաշխման համակարգի ազատականացման մոդելին անցման հնարավորությունը:

Ատենախոսությունում ստացված արդյունքների գիտական նորույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննարկված հիմնախնդիրներից շատերը ուսումնասիրվել են նորանկախ Հայաստանի Հանրապետության պատմության ամբողջ ժամանակահատվածի համար, լուծումները միտված են ապագային, ունեն համակողմանի վերլուծական և փաստական հիմքեր և չեն կրկնում այլ հեղինակների կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը և արդյունքների ներդրումը: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների և բացահայտված հիմնահարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, եզրակացություններն և առաջարկությունները կարող են նպաստել այս ոլորտում հետագա հետազոտությունների իրականացմանը, կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր և այն բոլոր պետական մարմինների կողմից, որոնք միտված են զարգացնելու և բարելավելու պետական քաղաքականության իրականացումը բնական մենաշնորհների ոլորտում: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև բնական մենաշնորհի հանդիսացող ընկերությունների կառավարիչների համար՝ ընկերության տնտեսական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ կառավարման ամբիոնում: Հետազոտության հիմնական դրույթներն իրենց նախնական լուսաբանումն են ստացել տպագրված վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, առաջարկություններից ու եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Այն ընդգրկում է 19 աղյուսակ և 8 գծապատկեր: Ատենախոսությունը շարադրված է 142 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառման

կարևորությունն ու նշանակությունը:

Հեղափոխության առաջին՝ «Բնական մենաշնորհների ձևավորման փոսամեթոդաբանական և կառավարման հիմքերը» գլուխը նվիրված է մենաշնորհների՝ մասնավորապես բնական մենաշնորհների հիմնական գործառույթների, կառավարման խնդիրների ու նպատակների, տնտեսագիտական էության, դրանց ուղղված հակամենաշնորհային քաղաքականության ու օրենսդրության, բնական մենաշնորհների կառավարման միջազգային փորձի վերլուծության և այդ ոլորտներում սակագնային կարգավորման մոդելների ուսումնասիրությանը:

Շուկայական տնտեսության արդյունավետ կազմակերպման հիմքը մրցակցային միջավայրն է, սակայն, մի շարք հանգամանքների պատճառով մրցակցությունն՝ առանձին շուկաների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, էական չէ: Այսինքն դրանց համար բնական վիճակը մենաշնորհացման բարձր մակարդակն է: *Բնական է համարվում այն մենաշնորհը, որի գործունեության արդյունքում նվազագույնի են հասնում արտադրության երկարաժամկետ միջին ոլորտային ծախսերը, ինչը թույլ է տալիս շուկայում ապրանքի գնի հանդեպ համապարփակ հսկողություն սահմանել:*

Ընհանուր առմամբ, բնական մենաշնորհները ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Այստեղ է, որ պետության կամ պետության կողմից լիազորված հատուկ մարմնի կողմից ակտիվ միջամտության արդյունքում բնական մենաշնորհ կազմակերպությունները պետք է իրենց ջանքերն ուղղեն մի կողմից՝ չտնտեսաբար հասարակական շահերը, իսկ մյուս կողմից՝ պահպանելու իրենց համար բնականոն աշխատանքային պայմանները: Ակնհայտ է նաև, «մենաշնորհ» և «բնական մենաշնորհ» տերմինների սահմանման կամ սահմանազատման խնդիրը, քանի որ տաբեր հեղինակներ մեկնաբանում են այս երևույթները յուրովի, և դեռևս հստակ սահմանազատված չեն այս երկու երևույթներին բնորոշ առանձնահատկությունները: Ատենախոսի կարծիքով մենաշնորհներին վերագրվող մի շարք երևույթներ՝ ներառյալ հակամենաշնորհային քաղաքականությունը, բնորոշ են նաև բնական մենաշնորհներին:

Մարդկային հասարակության տնտեսական զարգացման պատմությունից հայտնի է, որ մենաշնորհները գոյությունն են ունեցել դեռևս անտիկ ժամանակներից, որոնք ունեցել են ինչպես դրական, այնպես էլ բացասական կամ կանխարգելող նշանակություն: Գիտական գրականության մեջ հակամենաշնորհային օրենսդրության հիմքերի մասին նշվում են, որ դրա սաղմերը առկա են սկսած հռոմեական կայսրության ժամանակներից, որոնք դարեդար զարգանալով ունեցել են, թեև ոչ ուղղակի, բայց էական ազդեցություն ժամանակակից հակամենաշնորհային օրենքների մշակման վրա: Այնուամենայնիվ, ներկայումս ցանկացած զարգացած կամ զարգացող պետություն վարում է քաղաքականություն ընդեմ շուկայում անօրինական

մենաշնորհների, որոնք թերևս առանձնահատուկ լինելով տվյալ երկրին, բոլորն էլ ունեն նույն տրամաբանությունը՝ հնարավորինս նպաստել առողջ շուկայական հարաբերությունների ձևավորմանը:

Բնական մենաշնորհի ոլորտներում առանձնապես կարևորվել է ԱՄՆ-ի կարգավորման փորձի ուսումնասիրությունը, քանի որ ԱՄՆ-ն այդ ոլորտներում ունի ավելի երկար պատմություն և փորձ, ներկայումս բնական մենաշնորհի մի շարք ոլորտներ գործում են բնական մենաշնորհներին հատուկ մրցակցային պայմաններում, իսկ XX-րդ դարի ավարտին տնտեսական ու քաղաքական անկայության նոր ուղի ընտրած երկրներում օգտագործվել են ԱՄՆ-ի հակամենաշնորհային օրենքների հիմնարար դրույթներ:

Այս հետազոտության առումով կարևորվել են նաև բնական մենաշնորհի ոլորտների կառավարման առանձնահատկությունները ՌԴ-ում, որտեղ տնտեսական իրավիճակը փոխվել է անմիջապես ԽՍՀՄ փլուզումից հետո: Նոր հասարակական կարգով, գաղափարախոսությամբ և նոր տնտեսական քաղաքականությամբ Ռուսաստանում տեղի են ունեցել մի շարք արմատական փոփոխություններ: Այդ փոփոխություններից հատկապես ուսումնասիրվել է բնական մենաշնորհի ոլորտներում տեղի ունեցած գործընթացները, որոնք իրենց ազդեցությունն են թողել ինչպես Ռուսաստանի՝ այնպես էլ Հայաստանի տնտեսության վրա: Ի տարբերություն ՀՀ-ի՝ ՌԴ-ն ունի հստակ օրենսդրություն և օրենք բնական մենաշնորհների մասին, որով և կարգավորվում է բնական մենաշնորհի ոլորտները¹:

Ատենախոսի կողմից ուշադրության են արժանացել նաև ինտեգրացիոն կազմակերպությունների կողմից ընդունված (մասնավորապես ԵՄ և ԵԱՏՄ) դիրեկտիվները, որոնք վերաբերում են բնական մենաշնորհներին: Եվրոպական Միության մասին պայմանագրերը ուսումնասիրելիս, թերևս, հնարավոր չէ գտնել «բնական մենաշնորհ» տերմինը կամ ուղղակի այդ տերմինին առնչվող տեղեկատվություն: Այստեղից կարելի է ենթադրել, որ ԵՄ անդամ պետությունները այս առումով դեռևս չեն հասել փոխհամաձայնության, ինչը խոսում է բնական մենաշնորհների ընկալման տարբերությունների մասին: Իրավիճակն այլ է ԵԱՏՄ- դեպքում, որտեղ ոչ միայն խոսվում և օգտագործվում է «բնական մենաշնորհ» տերմինը, այլ նաև տրվում են այդ տերմինի հետ կապված հստակ սահմանումներ, բնական մենաշնորհի ոլորտների ցանկը (ըստ երկրների), դրանց նկատմամբ ազգային և վերազգային իրավասությունների սահմանը, կարգավորման ընդհանուր մեթոդները և սկզբունքները և այլն²:

Բնական մենաշնորհի ոլորտների սակագնային կարգավորման մեթոդները և մոտեցումները նույնպես բազմազան են, բայց որպես ընդհանուր սկզբունք կարելի է նշել պահանջվող ցուցանիշների ընտրությունը, բնական

¹ Федеральная антимонопольная служба, О ФАС, <http://fas.gov.ru/pages/about/overview/obshhee.html> , Հասանելի էր 29.11.2017թ

² Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, հավելված 20

մենաշնորհների գործունեության վերահսկման հաճախականությունը, շահույթի նորմայի կարգավորումը, սակագների սահմանումը, և այլ ընթացակարգային սկզբունքներ և գործոններ: Այդ մեթոդներից հեղինակը առանձնացրել է սահմանային ծախսերի և միջին ծախսերի վրա հիմնված, շահույթի նորմայի և սակագնի վերին սահմանի կարգավորման մոդելները: Նշված մոդելները, որքան էլ համարվում են համընդհանուր, միանշանակորեն չեն կարող ընդունվել բոլոր բնական մենաշնորհ ճյուղերում ծառայությունների սակագների սահմանման ժամանակ: Դա բնական է, քանի որ յուրաքանչյուր մեթոդ ստեղծվում և գործում է տարբեր և չկրկնվող պայմաններում: Այսինքն, մոդելը պետք է տեղայնացվի տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, և մոդել ընտրելուց առաջ պետք է հաշվի առնել նոր միջավայրի յուրահատուկ պայմանները, տնտեսական քաղաքականության խնդիրները և տվյալ երկրի առանձնահատկությունները:

Բնական մենաշնորհ ընկերությունների արդյունավետ կառավարումը և նշված ճյուղերի պետական կարգավորումը առավելագույնս կարևոր նշանակություն ունի տնտեսության կայուն աճն ապահովելու համար, քանի որ նշված ճյուղերում գործող կազմակերպություններից գրեթե յուրաքանչյուրը իր էական ազդեցությունն է ունենում տնտեսության զարգացման գործընթացում:

Աշխատանքի երկրորդ՝ «Բնական մենաշնորհները որպես հանրային ծառայությունների օբյեկտ և դրանց կառավարման առանձնահատկությունները» գլխում, ուսումնասիրվել են բնական մենաշնորհ ոլորտները և դրանց առանձնահատկությունները ՀՀ-ում, իրավիճակային վերլուծության են ենթարկվել բնական գազի և էլեկտրաէներգիայի շուկաների արդի վիճակը, իսկ վերջում, որպես բնական մենաշնորհ ընկերություն, կատարվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի տնտեսական գործունեության արդյունավետության վերլուծություն:

Ինչպես աշխարհի մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում, հանրային ծառայությունների և բնական մենաշնորհների մի շարք ոլորտներ ունեն ընդհանուր հատկանիշներ՝ մասնավորապես էներգետիկայի, ջրային տնտեսության, երկաթուղային տրանսպորտի և այլ ոլորտներում: Գրականության մեջ դեռևս հստակ տարանջատում չկա հանրային ծառայություն և բնական մենաշնորհ եզրույթների միջև՝ մասնավորապես, թե որ ոլորտներն են պատկանում հանրային ծառայություններին և որոնք՝ բնական մենաշնորհներին: Այդ իսկ պատճառով, բնական մենաշնորհները շատ հաճախ դիտվում են որպես հանրային ծառայություններ, իսկ իրավական կարգավորման համար հիմք են հանդիսանում հանրային ծառայությունների ոլորտում ընդունված դիրեկտիվները:

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրամատակարարման և ջրահեռացման, երկաթուղու և այլ ոլորտներ հանդիսանում են բնական մենաշնորհ ոլորտներ: Դրանք միաժամանակ դասվում են նաև հանրային ծառայությունների ոլորտների շարքին, քանի որ ընդունված չէ նշված ոլորտները ճանաչել որպես «բնական մենաշնորհ» ոլորտներ, իսկ այդ ոլորտներում

գործունեություն ծավալած ընկերությունների վերջնական նպատակը հասարակության կարիքների բավարարումն է: Սա է հիմնական պատճառը, որ հանրային ծառայություններ - բնական մենաշնորհ եզրույթների սահմանումները տալիս են տարատեսակ մեկնաբանությունների աղիթ:

ՀՀ տնտեսությունում բնական մենաշնորհ է Հայաստանի միասնական տրանսպորտային համակարգի մաս կազմող երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող «Հարավկովկասյան երկաթուղիներ» (ՀԿԵ) ՓԲԸ-ն:

Անդրադառնալով ջրային տնտեսությանը, նշվել է, որ այստեղ էլ, ըստ բնական մենաշնորհների համընդհանուր ճանաչում գտած տեսությունների, ձևավորվել է բնական մենաշնորհ, երբ ամբողջ շուկան սպասարկում է մեկ կազմակերպություն: Այդ կազմակերպությունը «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ն է:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս մոդելը կիրառության մեջ է դրվել 2004 թվականին և հենվում է միակ գնորդ-վաճառող շուկայի մոդելի վրա, որի արդյունքում էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող կազմակերպությանը (ՀԷՑ-ին) է միայն վերապահված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում արտադրողներից էլեկտրաէներգիա գնելու և այն սպառողներին վաճառելու իրավունքը:

Հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական մյուս ակտն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 2001 թ.-ին, իսկ օրենքի վերջին փոփոխություններով (2018թ.) ՀՀ կառավարությունը միտված է ազատականացնելու ՀՀ էներգետիկ շուկան, վերացնելու միակ գնորդ-վաճառող մոդելը (միայն էլեկտրական էներգիայի շուկայի մասով)՝ փոխարենը ստեղծելով նոր ազատական, մրցակցային մոդել:

Էլեկտրաէներգիայի ոլորտում ամենախնդրահարույցը, թերևս, կորուստներն են, որոնք մինչև 2015թ. միշտ եղել են նորմատիվից (2007թ.-2015՝ 13.6%, 2015թ.-2016՝ 11.2%) բարձր: Հեղինակը գտնում է, որ այդ կորուստները չեն կարող ամբողջովին դիտվել միայն բնական կորուստներ, այլ կարող են մեծամասամբ կապված լինել բնական մենաշնորհ կազմակերպության՝ ՀԷՑ-ի այդ ժամանակվա՝ 2006-2015թթ. սեփականտիրոջ-կառավարչի՝ «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ի, սխալ կամ անբարեխիղճ կառավարման հետ: Այդ ցուցանիշները չնայած տարբեր տարիներին ունեցել են նվազման միտում, սակայն երբևիցե չեն հասել բնական կորուստների սահմանին:

Տեխնոլոգիական, ինչպես նաև առևտրային կորուստները, էականորեն նվազել են 2016 թվականից, երբ «ՀԷՑ» ՓԲԸ-ը գնվեց «Տաշիր կապիտալ» ընկերության կողմից՝ շնորհիվ կառավարման մոդելի արդյունավետության բարձրացման, ծախսերի և կառավարման համակարգի օպտիմալացման և այլն: 2017 թվականին գրանցվել է թերևս լավագույն ցուցանիշը ուսումնասիրված ամբողջ ժամանակահատվածում՝ 539.5 մլն կվտ/ժամ կամ 8.80%-ը: Նկատի ունենալով այդ իրավիճակը՝ հեղինակը հարցադրում է կատարում, որ եթե հնարավոր էր իրականացնել այնպիսի քայլեր, որոնք 2 տարվա ընթացքում

հանգեցրեցին կորուստների զգալի չափով նվազեցման, ապա ինչու՞ այդ քայլերը չէին ձեռնարկվում շատ ավելի վաղ: Պատասխանելով այդ հարցին՝ ատենախոսությունում նշվում է 2 պատճառ՝ անկատար օրենսդրական դաշտն ու պետական կարգավորումը և «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ի անբարեխիղճ կառավարումը:

ՀՀ-ում բնական մենաշնորհի ոլորտներում դասական օրինակ է բնական գազի շուկան, որտեղ գործում է ընդամենը մեկ կազմակերպություն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ Ընկերություն) և տիրապետում է Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (այսուհետ Հանձնաժողով) կողմից տրված գազի ներկրման, փոխադրման, բաշխման և օպերատորի բացառիկ լիցենզիաներին: Ընկերությունը ի սկզբանե՝ հիմնադրվել էր որպես Հայ-Ռուսական ընկերություն, սակայն աստիճանաբար այն ամբողջովին դարձավ ռուսական «Գազպրոմ» ՀԲԸ-ի սեփականությունը: Ըստ Հայ-Ռուսական վերջին գազային համաձայնագրի՝ Հայաստանի գազի շուկան մինչև պայմանագրի ավարտը՝ 2043թ., հանձնվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին, իսկ կառավարությունը պարտավորվել է գազ գնել միայն այդ ընկերությունից:

Աղյուսակ 1				
Ներկրված գազի ծավալները ըստ երկրների				
Տարեթիվ	Ներկրված գազի քանակը՝ մլն խմ	Ռուսաստանի Դաշնությունից	ԻԻՀ-ից	Փոխադրված գազի ծավալը
2011	2069.1	1609.06	460.03	2018.66
2012	2455.5	1967.2	488.3	2298.4
2013	2361.05	1956.33	404.73	2283.47
2014	2450.9	2061.7	389.2	2315.9
2015	2371.8	2000.6	371.3	2233.6
2016	2236.5	1864.6	372	2132.4
2017	2378.7	1996	382.7	2241.7
Բոլոր տվյալները վերցված են ՀԾԿՀ պաշտոնական կայքէջից՝ psrc.am				

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ը վերջին տարիներին՝ 2011-2017թթ. Ռուսաստանից և Իրանից ՀՀ է ներկրել 2.2-2.5 մլն խմ գազ, ընդ որում ներկրման «առյուծի» բաժինը՝ 83-84% Ռուսաստանից է, իսկ մնացածը Իրանից:

«Գազպրոմ Արմենիայում» տիրող ներքին վիճակը և դրա պատճառահետևանքային կապերը «արտաքին աշխարհի» հետ հասկանալու համար, ատենախոսությունում կատարվել է Ընկերության հաշվետվությունների ֆինանսական վերլուծություն՝ հիմք ընդունելով ֆինանսատնտեսական դասական ցուցանիշները: Համաձայն վերլուծություն արդյունքների՝ Ընկերության կառավարումը չի կարելի համարել արդյունավետ, քանի որ վերլուծության ենթարկված բոլոր ցուցանիշները նշված ժամանակահատվածում ունեցել են բացասական միտում, այսինքն՝ կառավարման արդյունավետությունը գնալով նվազել է և հանգեցրել մի շարք բացասական հետևանքների: Այս առումով հեղինակը գտնում է, որ Ընկերությունը պետք է ներդնի կառավարման արդյունավետության բարձրացման նոր գործիքներ: Ի լրումն կատարված

վերլուծության, նշվում է նաև, որ նման մոտեցում կարելի է կիրառել մյուս բնական մենաշնորհի ոլորտներում՝ օգտագործելով նույն մեթոդիկան:

Աղյուսակ 2				
Գազի կորուստների գազօգտագործման ընթացքում 2011-2017թթ. մին խմ				
Տարեթիվ	Ներկրված քանակը	կորուստները փոխադրման համակարգում	Բաշխման համակարգում իրացված ծավալները	կորուստները բաշխման համակարգում
2011	2069.1	4.5%	1534.92	2.6%
2012	2455.5	4.1%	1608.9	2.4%
2013	2361.05	4.2%	1821.92	2.3%
2014	2450.9	4.2%	2008.8	2.1%
2015	2371.8	4.3%	1820.1	2.0%
2016	2236.5	4.6%	1844.3	2.1%
2017	2378.7	4.6%	1941.5	2.0%
Բոլոր տվյալները վերցված է ՀԾԿ կայքէջից՝ psrc.am				

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում գործող բնական մենաշնորհի ոլորտներն ունեն մի շարք խնդիրներ, ինչպես պետական կարգավորման, այնպես էլ, ընկերությունների անկատար և անարդյունավետ կառավարման առումով:

Արենախոսության երրորդ՝ «Բնական մենաշնորհների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» գլխում, ներկայացվել են բնական մենաշնորհների իրավական կարգավորման հիմքերը, դրանց կատարելագործման և զարգացման ռազմավարության, սակագնային քաղաքականության և գնագոյացման մեթոդիկայի բարելավման ուղիները ՀՀ-ում:

Հայաստանի բնական մենաշնորհի ոլորտներին առնչվող օրնսդրաիրավական դաշտի ուսումնասիրությունից պարզվել է, որ ո՛չ «Էներգետիկայի մասին» օրենքով, ո՛չ «ՀԾԿ» մասին օրենքով, և ո՛չ էլ ՀՀ այլ օրենքներով սահմանված չէ «բնական մենաշնորհ» եզրույթը: Այս նկատառումներից ելնելով՝ հեղինակը բնական մենաշնորհի ոլորտները կարգավորող պետական մարմիններին, ինչպես նաև մյուս շահագրգիռ անձանց առաջարկել է, կիրառել «բնական մենաշնորհ» եզրույթը և բնական մենաշնորհների հետ կապված իրավահարաբերությունները բերել «օրենքի դաշտ»՝ սահմանելով հստակ օրենսդրություն և տարանջատել «հանրային ծառայություն» եզրույթի հետ ասոցացվող օրենքների տարատեսակ մեկնաբանություններից: Այլ խոսքերով, «բնական մենաշնորհով» պայմանավորված իրավահարաբերությունները դե յուրե-ից դարձնել դե ֆակտո:

Ատենախոսը եկել է այն եզրահանգմանը, որ առավել հավասարակշռված պետական քաղաքականության առումով բնական մենաշնորհի ոլորտներում պետական կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

նախ և առաջ անհրաժեշտ է հստակեցնել «բնական մենաշնորհ» հասկացությունը և դրանում ընգրկվող ոլորտները: Հեղինակը, ի լրումն դրա, հիմնավորում է, որ ՀՀ օրենսդրությամբ պետք է հստակ ամրագրված լինի «բնական մենաշնորհ» եզրույթը, տրված լինի դրա տնտեսական մեկնաբանումը, որին կարող է նպաստել նաև աշխատանքում ներկայացված «Բնական մենաշնորհի» մասին օրենքի հայեցակարգային նախագիծը:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ էներգետիկայի փոփոխված օրենքում՝ ի տարբերություն էլեկտրաէներգիայի շուկայի, բացարձակապես չի խոսվում բնական գազի շուկայի ազատականացման մասին, և ինչպես նշվում է աշխատանքում, *Հայաստանում բնական գազի շուկան պետք է աստիճանաբար գնա ազատականացման, մասնավորապես այն հաղվածներում, որտեղ օբյեկտիվորեն հնարավոր է մրցակցություն: Նմանատիպ վիճակը հնարավորություն կտա մրցակցության հաշվին ունենալ ավելի մատչելի գին յուրաքանչյուր խմ գազի համար:*

Ատենախոսը, անդրադառնալով էներգետիկ ոլորտում սակագնային քաղաքականությանը, ներկայացնում է էլեկտրաէներգիայի գործող միջին սակագնի կառուցվածքը. *արտադրող կայաններից ՀԷՑ-ի կողմից գնվող էլեկտրաէներգիա՝ 21.6 դրամ (54%) + ԱԱՀ՝ 6.7 դրամ (16.67 %) + ՀԷՑ-ի սակագնային մարժա 11.6 դրամ (29.2%) = 39.9 դրամ/կվտժ (ներառյալ ԱԱՀ):*

ՀԷՑ-ի սակագնային մարժան կազմված է մի շարք բաղադրիչներից՝ կորուստներ և սեփական կարիքների համար օգտագործվող էլեկտրաէներգիա, աշխատավարձի գծով ծախսեր, վերանորոգման և նյութական ծախսեր, շահագործման և պահպանման այլ ծախսեր, անհուսալի դեբիտորական ծախսեր, մաշվածություն, շահույթ, փոխհատուցման ենթակա գումար:

Վերոնշյալ բաղադրիչներից՝ կորուստները՝ ՀԷՑ-ի սակագնային մարժայի՝ 11.6 դրամի մեջ, կազմում են 24% կամ 2.81 դրամ: Կորուստների 11.03% մեծությունը որոշվել է 2015 թվականի սակագների վերանայման ժամանակ, որից 10.03%-ը տեխնոլոգիական անխուսափելի կորուստներն են, իսկ 1%-ը մեթոդիկայով նախատեսված թույլատրելի առևտրային կորուստները³: Կորուստների կրճատման ուղղությամբ Ընկերության ներդրումները խրախուսելու նպատակով Մեթոդիկայում ամրագրվել են հետևյալ դրույթները՝ 2016-2020 թթ. սակագնի հաշվարկներում կորուստները կմնան անփոփոխ 11.03%, 2021-2025թթ.-7.5%, 2025-2027թթ.-7%, իսկ 2028 թ. սկսած հաշվարկներում կորուստը կհաշվարկվի 6.4%-ից ոչ ավելի չափով:

Արենախոսությունում նշվում է, որ եթե ՀԷՑ-ը կարողանում է նվազեցնել իր կորուստները սակագնի հաշվարկման հիմքում ընկած 11.03%-ից ցածր, ապա առաջացած լրացուցիչ շահույթը մնում է Ընկերության տնօրինության տակ՝ որպես գերշահույթ: Հեղինակի կարծիքով, այդ պարագայում Հանձնաժողովը պետք է կատարի մեթոդիկայի ճշգրտում՝ սահմանելով կորուստների ավելի փոքր

³ ՀՀ ՀՏԿ Հ 08.10.2002թ. №65Ա որոշմամբ

մեծություն, որը թույլ կտա իջեցնել սակագինը: 2016թ.-ին ՀԷՑ-ում կորուստների նվազեցման հետևաքնով առաջացած լրացուցիչ շահույթը կազմել է շուրջ 1,35 մլրդ դրամ $((11.03\% - 9,90\%) \times 1.2$ մլրդ դրամ), իսկ 2017թ.-ին՝ շուրջ 2,67 մլրդ դրամ $((11.03\% - 8.80\%) \times 1.2$ մլրդ դրամ):

Մարժայում էական են նաև շահույթի և նյութական ծախսերի մասնաբաժինները՝ 2.917 և 1.003 դրամ, համապատասխանաբար 25% և 8.6%: Շահույթի թույլատրելի նորման մինչև հարկումը 14% է, իսկ հարկումից հետո՝ 12%, որի հիմքում ընկած է անհրաժեշտ հասույթի սկզբունքը⁴: Հավելվածը սահմանում է նաև, որ Հանձնաժողովը ակտիվների շահութաբերության նորման սահմանում է ելնելով Հայաստանում դիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս, քան 12%: Հեղինակը եկել է այն համոզմանը, որ մեթոդիկան ունի վերանայման կարիք, քանի որ նրանում չի բացատրվում, թե որոնք կարող են համարվել ՀՀ-ում դիսկի նույն մակարդակով գործող ընկերություններ, ինչ չափորոշիչներով է որոշվում և կայացվում դրա մեծության որոշումը: Մեթոդիկայի վերանայման պարագայում շահույթի նորման պետք է համապատասխանեցնել էներգետիկ ոլորտում գործող մյուս ընկերությունների շահույթի նորմաների հետ: Հեղինակը միաժամանակ գտնում է, որ խախտված է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջները, քանի որ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցողների համար ստեղծված չեն գործունեության միատեսակ պայմաններ:

Էլեկտրաէներգիայի սակագնի նվազեցման գործում ուղղակի ազդեցություն է թողնում նաև գազի սակագինը, քանի որ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների 35-40%-ը ապահովում են 3 ԶԷԿ-եր, որոնք էլեկտրաէներգիայի արտադրության գործընթացում օգտագործում են բնական գազ: Աշխատանքում առաջարկվում է, որ Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում պետք է խրախուսի ԶԷԿ-երում իրականացնել այնպիսի ներդրումային ծրագրեր, որոնք միտված կլինեն ՕԳԳ-ի բարձրացմանը՝ դրանով իսկ նվազեցնելով միջին կշռված սակագինը:

Ատենախոսը եկել է այն եզրահանգմանը, որ վերընշված խնդիրների կարգավորման և Ընկերության արդյունավետ կառավարման դեպքում հնարավոր է ունենալ միավոր սակագնին բաժին ընկնող քիչ ծախսեր և նվազեցնել սակագինը սպառողական բոլոր խմբերի համար:

Հեղինակը ուսումնասիրելով բնական գազի գործող միջին սակագինը (ԱՄԼ դոլարային արտահայտությամբ)՝ ներկայացնում է դրա կառուցվածքը՝ 150 (սահմանին գին) + 42,5 (ԱԱՀ) + 62,55 (Ընկերության մարժա) = 255,06: Իսկ Ընկերության Մարժան՝ $62.55 = \text{Տեխնոլոգիական կորուստներ՝ } 10.81 + \text{սեփական կարիքներ՝ } 0.91 + \text{շահագործման և սպասարկման ծախսեր՝ } 41.17 + \text{մաշվածություն՝ } 10.73 + \text{շահույթ՝ } 19.11 + \text{անհուսալի դեբիտորական պարտքեր՝}$

⁴ ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002թ. նոյեմբերի 1 No 79Ա որոշում՝ Հավելված 2

0.06 – սակագնով չփոխհատուցվող հողվածներ՝ 20.24:

Ատենախոսը հետազոտության արդյունքում բացահայտել է, որ գազի ոլորտում տարիներ շարունակ տեղի են ունենում գազի տեխնոլոգիական կորուստներ, որն այլ կերպ կոչվում է գերնորմատիվային կամ առևտրային: Վերջին տարիներին այդ կորուստները ամբողջ համակարգում եղել են 6.3-7.1% շրջակայքում՝ լինելով գրեթե միշտ ավելին Հանձնաժողովի կողմից հաստատված գերնորմատիվային կորուստի նորմայից: 2002-2016 թթ.. համար Հանձնաժողովը այդ գերնորմատիվային կորուստները սահմանել էր 5.37%, իսկ 2016թ-ից սկսած բարձացվել է մեկուկես տոկոսով՝ սահմանելով 6.69%⁵: Հեղինակը եկել է այն եզրահանգմանը, որ Ընկերությունը այս տարիներին չի կատարել Հանձնաժողովի առջև ստանձնած իր ներդրումային պարտավորությունները, քանի որ դիտարկված ամբողջ ժամանակահատվածում նորմատիվի էական նվազում չի եղել: Միաժամանակ պետք է ընդունել, որ Հանձնաժողովի այդ որոշումները չեն արտահայտում ժամանակի պահանջները և բնական կորուստների մեթոդաբանությունում պետք է ամրագրել նոր մոտեցում, ըստ որի նոր մեթոդաբանության հիմքում պետք է դրված լինի գազափոխանակության ընդունման կամ վերանորոգման ժամանակ կատարված փորձարկումների արդյունքները և տեխնոլոգիական սարքերի անձնագրային նորմատիվները, այլ ոչ թե ցանցերում տեղի ունեցող փաստացի կորուստները:

Սակագնի վրա ազդող մյուս կարևոր գործոնը շահույթն է, որը կազմում է Ընկերության մարժայի ավելի քան 30%-ը՝ 19,11 դրամ (ըստ Համաձայնագրի կարող է լինել 10 %՝ հարկերով, իսկ հարկումից հետո՝ 8%):

Համաձայն՝ «Գազամատակարարման համակարգում կարգավորող սակագների հաշվարկման» մեթոդիկայի, թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի և ակտիվների շահութաբերության նորմայի արտադրյալ: Հեղինակի կարծիքով սակագնի հաշվարկման մեթոդաբանության մեջ վերանայման կարիք ունի թույլատրելի շահույթի հաշվարկը, որում ներառված է ըստ ակտիվների շահութաբերությունը, որը պարունակում է հիմնական կապիտալը և կատարված ներդրումները, առանց մաշվածության ներգրավման: Բնական գազի համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, հեղինակը գտնում է, որ առավել նպատակահարմար է այդտեղ օգտագործել շահույթի և հասույթի հարաբերությունը՝ ըստ շահութաբերության:

Սակագնի վրա ազդող մյուս գործոնը «Գազայրում Արմենիայի» շահագործման և սպասարկման ծախսերն են. ընդամենը 41,17 ԱՄՆ դոլար, որից 5,28 նյութական, 10,77 կապիտալ նորոգման ու պահպանման, իսկ 19,06-ը աշխատավարձի գծով ծախսերն են: Սակագնում հաշվարկված աշխատավարձային տարեկան ֆոնդը կազմում է շուրջ 15,7 մլրդ դրամ (5873

⁵ ՀԾԿՀ 14.06.2002թ. №41 Ա և ՀԾԿՀ 26.12.2002թ. №97Ա որոշումներ

աշխատակիցների թիվը բազմապատկած էներգետիկայի ոլորտի միջին ամսական աշխատավարձ՝ 227 հազ դրամ): Հեղինակը գտնում է, որ Հանձնաժողովը «Գազպրոմ Արմենիայի» զարգացման ներդրումային ծրագրերը հաստատելիս մեթոդիկայում պետք է ամրագրի համապատասխան խրախուսողական նորմ, որը «կստիպի» Ընկերությանը օպտիմալացնել աշխատողների քանակը՝ դրանով իսկ նվազեցնելով աշխատավարձի ֆոնդը:

Բնական գազի ոլորտում կարևորվել է նաև կալորիականության խնդիրը: ՌԴ-ից Հայաստան ներկրվող բնական գազի ջերմատվությունը տարվա ընթացքում փոփոխվում է 8100-ից մինչև 8950 կկալ/խմ տիրույթում: Հեղինակը գտնում է, որ նմանատիպ փոփոխությունները տեղի են ունենում առանց գազասպառողներին տեղեկացնելու և այդ փոփոխությունները բացասական են անդրադառնում սպառողների գազօգտագործման սարքավորումների աշխատանքի արդյունավետության վրա, հանդիսանալով նրանցում գազի թերալյուման և վթարների պատճառ: Բացի դրանից հետազոտությունում նշվում է, որ գազի ջերմատվության փաստացի միջինացված մեծությունը պետք է հիմնված լինի փորձագիտական տվյալների ուսումնասիրության վրա և գտնվի թույլատրելի փոփոխությունների նվազագույն տիրույթում:

Այդ ոլորտում առկա մյուս խնդիրը կապված է գազահաշվիչների ստուգաչափման հետ: ՀՀ-ում կա երեք ստուգաչափող ընկերություն, որոնք կատարում են ստուգաչափումը ըստ հաշվիչի ծագման երկրի: Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ նշվում է, որ ստուգաչափումը հիմնականում իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի դուստր ընկերությունում (եթե ստուգաչափման նախաձեռնողը Ընկերությունն է), որը կարող է առաջացնել շահերի բախում՝ ի վնաս սպառողի: Հետևաբար, գազահաշվիչների ստուգաչափումը պետք է իրականացվի անկախ ստուգաչափող մարմինների կողմից և մրցակցային միջավայրում:

Ներկայացված հաջորդ գործոնը ներտնային գազասպասարկումն է, որը թեև ուղղակի ազդեցություն չի թողնում գազի սակագնի ձևավորման ժամանակ, սակայն լրացուցիչ բեռ է հանդիսանում բաժանորդների համար: Գազասպասարկման որակի առումով հեղինակը կարևոր է համարում հստակեցնել, թե ի՞նչ է նշանակում որակյալ գազասպասարկման ծառայություն և արդյոք գազասպասարկման անվտանգությունը պետք է դիտարկել որակյալ գազասպասարկման ծառայության մեջ, թե պետք է դիտարկել դրանից անկախ: Ինչպես նաև նշվում է, որ օրենսդրորեն պետք է հստակ ամրագրված լինի, թե ինչ է որակյալ գազասպասարկումը և ինչը պետք է դիտարկել դրա տակ:

Ատենախոսության վերջում հեղինակը կարևոր է համարում բացահայտել նաև բնական մենաշնորհի ոլորտներում կատարված ներդրումների ծավալը, ուղղվածությունը և թե դրանք ինչ ազդեցություն են ունենում սակագնի վրա: Թերևս ամենակարևորն այն է, թե արդյոք կատարված ներդրումները միտված են համակարգի զարգացմանը, արդյոք այդ ներդրումները և ավելացած կապիտալը ունեն բարձր օգտակատրություն վերջնական բարիքի ստեղծման

համար, իսկ եթե ոչ, ապա հեղինակի կարծիքով Հանձնաժողովը չպետք է հաստատի նմանատիպ ներդրումները՝ անհարկի կապիտալազոյացումից և անարդյունավետ ներդրումներից խուսափելու համար: Ներդրումների արդյունավետության ցուցանիշ է նաև այն, թե ինչ ազդեցություն է թողնում այդ ներդրումը վերջնական սակագնի ձևավորման ժամանակ: Այն կարճաժամկետում կարող է ունենալ բացասական ազդեցություն սակագնի վրա, բայց այնուամենայնիվ երկարաժամկետում պետք հանգեցնի սակագների նվազեցմանը, իսկ եթե այդ պայմանը չի ապահովվում, ապա Հանձնաժողովը չպետք է հաստատի այդ ներդրումը:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված և ձևակերպված են հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Շուկայական տնտեսության արդյունավետ կազմակերպման հիմքը մրցակցային միջավայրն է, սակայն, մի շարք հանգամանքների պատճառով մրցակցությունն՝ առանձին շուկաների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից, շահեկան չէ: Այսինքն դրանց համար բնական վիճակը մենաշնորհացման բարձր մակարդակն է: Բնական է համարվում այն մենաշնորհը, որի գործունեության արդյունքում նվազագույնի են հասնում արտադրության երկարաժամկետ միջին ոլորտային ծախսերը, ինչը թույլ է տալիս շուկայում ապրանքի գնի հանդեպ համապարփակ հսկողություն սահմանել, իսկ ապրանքի (ծառայության) որոշակի քանակ թողարկելուց հետո կարող է իր արտադրությունը կազմակերպել ավելի քիչ ծախսերով, քան մրցակցային շուկայում:

2. Ներկայումս բնական մենաշնորհները ՀՀ-ում կարգավորվում են հանրային ծառայությունների ոլորտները կարգավորող իրավական հիմքերով, ինչն ավելի շատ տալիս է տարընթերցումների և երկմաստ մեկնաբանությունների տեղիք, քանի որ «Հանրային ծառայություն» հասկացությունը լիարժեք չի կարող արտահայտել բնական մենաշնորհների բովանդակությունն ու էությունը: Այդ օրենսդրական բացը լրացնելու համար աշխատանքում ներկայացվել է «Բնական մենաշնորհի» մասին օրենքի հայեցակարգի նախագիծը:

3. Բնական մենաշնորհի ոլորտներում կիրառվող սակագնային կարգավորման մոդելները հիմնականում չեն համապատասխանում ժամանակի պահանջներին, ունեն արմատական վերանայման կարիք և հիմնվելով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա, Հանձնաժողովը պետք է մշակի նոր մեթոդիկաներ ըստ ոլորտների, որոնք ավելի լավ պայմաններ կստեղծեն ինչպես Ընկերությունների, այնպես էլ հասարակության համար:

4. «Բնական մենաշնորհի» մասին օրենքի ընդունումից զատ, անհրաժեշտ է իրականացնել ոլորտի բարեփոխումային համալիր ծրագիր և ցանցերի ազատականացում: Այնուհետև, նկատի ունենալով, զարգացած երկրների փորձը, էլեկտրաէներգիայի շուկայի մրցակցային մոդելը և մի քանի այլ հանգամանքներ, աշխատանքում առաջարկվել է ազատականացնել

Հայաստանում բնական գազի շուկան, մասնավորապես այն հատվածներում, որտեղ օբյեկտիվորեն հնարավոր է ապահովել բնական մենաշնորհներին հատուկ մրցակցային միջավայր:

5. ՀՀ գրեթե բոլոր բնական մենաշնորհի ոլորտներում առկա մի շարք խնդիրներ պահանջում են համակարգային լուծումներ, որոնց բացահայտմանը կարող է նպաստել առանձին ոլորտներում կատարված իրավիճակային վերլուծությունները: Այս առումով, աշխատանքում կարևորվել է «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսական վերլուծությունը, որի նպատակն է բարձրացնել ընկերության տնտեսական կառավարման արդյունավետությունը:

6. Բնական մենաշնորհի ոլորտներում կառավարման ու կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է այդ ոլորտներում կատարվող ներդրումների նկատմամբ ունենալ խիստ վերահսկողություն: Այս առումով կարևոր է բացահայտել այդ ոլորտներում կատարված ներդրումների ծավալը, ուղղվածությունը և թե ինչ ազդեցություն են ունենում սակագնի վրա: Թերևս ամենակարևորն այն է, թե արդյոք կատարված ներդրումները միտված են համակարգի զարգացմանը, արդյոք այդ ներդրումները և ավելացած կապիտալը ունեն բարձր օգտակարություն վերջնական բարիքի ստեղծման համար և թե ինչ ազդեցություն են թողնում այդ ներդրումները վերջնական սակագնի ձևավորման ժամանակ:

7. Բնական մենաշնորհի բոլոր ոլորտներում կան ինչպես համընդհանուր, այնպես էլ միայն այդ ոլորտին բնորոշ գործոն-խնդիրներ, որոնց արդարացի կարգավորումը անհրաժեշտ է և՛ արտադրողներին, և՛ սպառողներին: Էներգետիկ ոլորտում այդ գործոններից կարելի է առանձնացնել բնական կորուստները, շահույթի մակարդակը, ներդրումները, իրականացված ծախսերն ու գնումները, աշխատատեղերի օպտիմալացումը և այլն, որոնք հնարավոր է դարձնել ավելի արդյունավետ Ընկերություններում կառավարման որակի բարելավման դեպքում:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ հեղինակը գալիս է այն եզրահանգմանը, որ բնական մենաշնորհների կարգավորման գործընթացում պետության դերն առաջին հերթին պետք է կայանա նրանում, որպեսզի ոչ միայն սահմանի հստակ և կայուն «խաղի կանոններ», կարգավորի ապրանքների (ծառայությունների) գները (սակագները), սահմանի ռազմավարական զարգացման ուղղվածությունը, վերահսկի ապրանք արտադրողների (ծառայություն մատուցողների) կողմից կատարվող ծախսերը, ապրանքների (ծառայությունների) արտադրության (սպասարկման) որակը, աջակցի նորմալ կարգավորվող մեխանիզմների իրագործմանը, որոշի սպասարկման ենթական սպառողների խմբերը, այլև չսահմանափակի ընկերությունների կառավարման ինքնավարությունը: Բնական մենաշնորհի ընկերությունների հաջող կառավարումը պայմանավորված է վերը քննարկված կառուցվածքային, օրենսդիրական, կազմակերպչական, ֆինանսական և տեխնիկական հարցերի համաժամանակյա բարեփոխումների կատարմամբ:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված վեց գիտական հոդվածներում:

1. Հայկ Խաչատրյան «Հակամենաշնորհային օրենքների և քաղաքականության քննական վերլուծություն», «Այլընտրանք» գիտական հանդես, 2017 #4 Հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 229-234

2. Հայկ Խաչատրյան «Բնական մենաշնորհի տնտեսագիտական էությունը», «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և զարգացում», ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով, 2017թ. Նոյեմբերի 22-24, էջ 704-709

3. Հայկ Խաչատրյան «Սակագնային կարգավորման մոդելները բնական մենաշնորհ ոլորտներում», «Հանրային կառավարում» գիտական հանդես 3-4/ 2018թ. , էջ 38-45

4. Հայկ Խաչատրյան «Բնական մենաշնորհ ոլորտները ՀՀ-ում և դրանց առանձնահատկությունները» «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես #5-6 (213-214) 2018 էջ 87-91

5. Հայկ Խաչատրյան «Գազպրոմ Արմենիա «ՓԲԸ-ի գործունեության տնտեսական արդյունավետության վերլուծություն», «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես #5-6 (213-214) 2018 էջ 91-95

6. Հայկ Խաչատրյան «Բնական մենաշնորհների իրավական կարգավորման հիմքերը և կատարելագործման ուղիները ՀՀ-ում» «Այլընտրանք» գիտական հանդես, 2018 #4 Հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 265-271

Проблемы управления естественными монополиями (по материалам РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.02 «Экономика, управление хозяйством и его сферами»

Защита диссертации состоится 4 июля 2019 г. В 14⁰⁰ часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего с Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Работа посвящена проблемам управления естественными монополиями и способам их улучшения. С этой целью были изучены и решены следующие проблемы:

- изучение природы естественных монополий, их методологические основы, исторические особенности формирования, сущность антимонопольной политики, вопросы управления, оценка их роли в развитии государства и общества,
- выявление и исследование существующих связей между естественными монополиями и общественными службами,
- выявление международного опыта управления естественными монополиями, проблемы, принципы, модели тарифного регулирования и их применение в Республике Армения,
- изучение существующих проблем в сфере естественных монополий и разработка способов повышения эффективности управления сектором на основе полученных результатов,
- представление особенностей проблем управления естественными монополиями на примере энергетического рынка, оценка роли естественных монополий в жизни экономической системы, выявление факторов, которые оказывают негативное влияние на деятельность компаний, работающих в этой области,
- поиск путей улучшения правовой базы и тарифной политики на рынках природного газа и электроэнергии.

Объектом исследования является сфера естественных монополий РА, а предметом исследования – вопросы повышения эффективности управления компаниями естественных монополий.

Первая глава диссертации посвящена изучению основных функций, целей и задач естественных монополий, анализу экономической сущности, анализу антимонопольной политики и законодательства, практики международного монополистического управления и модели тарифного регулирования в этих областях.

Вторая глава работы посвящена изучению сфер естественной монополии и их особенностям в Республике Армения, было подвергнуто ситуационному анализу текущее состояние рынков природного газа и электроэнергетики, и в конце, в качестве естественной монопольной компании, был проведен анализ эффективности экономической деятельности ЗАО «Газпром Армения».

Третья глава диссертации посвящена основам правового регулирования естественных монополий, способам их совершенствования и развития, способам улучшения тарифной политики и методов ценообразования в Республике Армения.

Основные научные результаты работы, обусловленные задачами, изложенными в работе, состоят в следующем:

- В результате всестороннего анализа изучены и выявлены существующие связи в отношении понятий «естественная монополия» и «государственная служба», была обоснована необходимость принятия закона об естественных монополиях, регулирующего сферу деятельности.

- Были разработаны комплексные решения для секторальных вопросов в отношении политики тарифного регулирования естественных монополий, поскольку некоторые нормативные нормы устарели и не отражают нынешний уровень экономического развития,

- на основе комплексного изучения систем передачи и распределения природного газа была обоснована возможность перехода к модели либерализации системы распределения природного газа .

**Management Issues of Natural Monopolies
(based on the materials of the Republic of Armenia)**

The dissertation is submitted for pursuing the scientific degree of PhD in Economics in the field 00.02 “Economics, Management of the Economy and its spheres”

The defense of the dissertation will take place 4th of June, 2019, at 14⁰⁰ o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str. Yerevan, 0025

Summary

The Dissertation is devoted to the management issues of natural monopolies and the ways to improve them. To solve the problem in question the following objectives were set and presented in the Dissertation:

- To study the nature of natural monopolies, their methodological foundations, historical features of the formation, the essence of antitrust policy, management issues, to evaluate their role in the development of the state and society
- To identify and investigate the existing links between natural monopolies and public services
- To study the international experience of natural monopoly management, problems, principles, models of tariff regulation and their application in the Republic of Armenia
- To study the existing problems in the field of natural monopolies and based on the obtained results to develop ways of improving the sector of management,
- To present the features of the management of natural monopolies on the example of energy market, to evaluate the role of natural monopolies in the life of the economic system, to identify the factors that have a negative impact on the activities of companies involved in this area
- To find the ways to improve the legal framework and tariff policy in the markets of natural gas and electricity.

The object of the research is the sphere of natural monopoly of the Republic of Armenia, and the subject of the research are the issues related to the efficiency increase of natural monopoly companies management.

The first chapter of the Dissertation is devoted to the study of the main

functions, goals and objectives of natural monopolies, analysis of the economic nature, analysis of antitrust policy and legislation, the practice of international monopolistic management and the model of tariff regulation in these areas.

The second chapter of the Dissertation is devoted to the study of natural monopoly spheres and their features in the Republic of Armenia, the current state of natural gas and electricity markets was subjected to situational analysis, and, in the end, as a natural monopoly company, the efficiency of “Gazprom Armenia” CJSC’s economic activity was analyzed.

The third chapter of the research is devoted to the basics of the legal regulation of natural monopolies, ways of their improvement and development, ways of improving the tariff policy and pricing methods in the Republic of Armenia.

The main scientific results developed in the work are as follows.

- As a result of a comprehensive analysis, the legal basis, their commonality and differences with regard to the concepts of “natural monopoly” and “public service” have been clarified, and the need to adopt a law on natural monopolies regulating the scope of activity has been justified.
- Comprehensive solutions have been developed for sectoral issues with regard to the policy of tariff regulation of natural monopolies, since some regulations are outdated and do not reflect the current level of economic development.
- Based on an extensive study of the transmission and distribution systems of natural gas, the possibility of a transition to a model of natural gas distribution system liberalization has been substantiated.